

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/6

13 սեպտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Մաստեր-Քոմփանի» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 29.07.2016թ. թիվ 2134401 ակտի դեմ:

«Մաստեր-Քոմփանի» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը տեղեկացնում է, որ սույն թվականի հուլիսի 13-ին Վանաձոր քաղաքի, Տիգրան Մեծ 77 հասցեում գործող խանութում կատարվել է հսկիչ գնում, որի արդյունքում համակարգչի և ՀԴՄ սարքի անհայտ սխալի պատճառով ՀԴՄ կտրոն չի տպվել (վաճառողի կողմից համակարգչային ծրագրով ՀԴՄ սարքին հրաման ուղարկելու պահը ֆիքսված է եղել խանութում տեղադրված անվտանգության տեսախցիկով): Հարկային տեսուչներ Մհեր Ֆռանգույանի և Գագիկ Ասատրյանի կողմից փաստի առթիվ կազմվել է արձանագրություն: Նույն օրը գանգատաբերը դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի տարածքային հարկային տեսչության ընթացիկ հսկողության բաժնի պետին կրկնակի ստուգում անցկացնելու խնդրանքով և ներկայացրել է ՀԴՄ կտրոն չտրամադրելու պատճառը: Վերջինս տեղեկանալով կատարվածի մասին հայտնել է, որ ոչնչով չի կարող օգնել և պետք է կազմվի ակտ:

Գանգատաբերը տեղեկացնում է նաև, որ խանութի սրահի մակերեսը 10 մ² է: Ապրիլ ամսին խանութը թալանվել է և ընկերությունը գտնվում է ֆինանսական ծանր կացության մեջ: Տուգանքի գումարի վճարման պատճառով ընկերությունը վերջնականապես կսնանկանա և կլուծարվի:

ԶԼՄ-ներից տեղեկանալով գերփոքր բիզնեսին ՊԵԿ-ի կողմից աջակցելու որոշման մասին, գանգատաբերն ակնկալում է աջակցություն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 28.06.2016թ-ի թիվ 2134401 հանձնարարագրի համաձայն «Մաստեր-Քոմփանի» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 29.07.2016թ. թիվ 2134401 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 150.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ քաղաքացի Սիրամարգ Աթյանի կողմից 13.07.2016թ-ին ժամը 15:16-ին ք.Վանաձոր, Տ.Մեծի 77 հասցեում գտնվող «Մաստեր-Քոմփանի» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից կանխիկ դրամով կատարվել է գնում 2900 դրամի չափով՝ 1 հատ համակարգչի մկնիկ: Վաճառողուհի Սոնա Կոստանդյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում իրականացնող

անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 15:16-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 240 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Չմուտքագրված 2900 դրամը ժամը 15:17-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 3140 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, որը նույն կարգի 40-րդ կետի համաձայն հանդիսանում է ՀԴՄ շահագործման կանոնների խախտում: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 150.000 դրամ:

Ըստ գանգատի, Ակտի 1-ին կետով արձանագրված խախտումը, այն է՝ կատարված գնման դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը, թույլ է տրվել համակարգչի և ՀԴՄ սարքի անհայտ սխալի պատճառով: Գանգատում նշված է նաև, որ վաճառողի կողմից համակարգչային ծրագրով ՀԴՄ սարքին հրաման ուղարկելու պահը ֆիքսվել է խանութում տեղադրված անվտանգության տեսախցիկով: Սակայն Հանձնաժողովին նշված հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել: Այսինքն, սույն գործում առկա չէ որևէ հիմնավոր ապացույց, որը կվկայեր Ակտով արձանագրված խախտումը ծրագրային խախտման հետևանքով կատարված լինելու՝ կատարված խախտման մեջ ընկերության մեղքի առկայությունը բացակայելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները խախտելու հանգամանքը, ինչի համար և կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 29.07.2016թ. թիվ 2134401 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ